**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՐԳԵԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ**
**ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ**

---

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի Մարզի «Գետարգելի հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի մաթեմատիկա (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել ու համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են **2024թ.-ի սեպտեմբերի 9-ից սեպտեմբերի 20–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 25-ին՝ ժամը 15:00 –ին,** ՀՀ Կոտայքի մարզի Գետարգելի հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-14-13-04 հեռախոսահամարով: